«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

N 04/032-965

«27» 05 2014թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
պարոն Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն նախարար

Կից Ձեզ ենք ներկայացնում «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ԳԲԽ-15/14 բողոքի վերաբերյալ Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված եզրակացության պատճենը:

Առդիր՝ 8 թերթ:

Հարգանքով՝

պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝
Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժին
Լ. Եղիազարյան
հեռ. 28-93-28

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«26» 05 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. Թունյան

N ԳԲԽ-15/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Լիգապլյուս» ՍՊԸ-ի կողմից 07.05.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Լիգապլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Լիգապլյուս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրոնային գնումների համակարգով /www.armeps.am/ 2014 թվականի ապրիլի 1-ին հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնման ընթացակարգ՝ շրջանակային համաձայնագրով նախատեսված կարգով: Գնման ընթացակարգով գնման առարկա է հանդիսացել շինանյութի ձեռքբերումը: Սակայն www.armeps.am էլեկտրոնային կայքում մրցույթը հայտարարվել և վերնագրվել է որպես դեղորայքի ձեռքբերման ընթացակարգ: Մասնավորապես, կայքում տեղադրված համապատասխան գլխագրերում այն ներկայացվել է հետևյալ կերպ՝ ՄՀ-ի վերնագիրը բաժնում՝ որպես ««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով դեղորայքի գնման ընթացակարգի հրավեր», նկարագրություն բաժնում՝ որպես ««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/11 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով դեղորայքի գնման ընթացակարգի հրավեր» և այլն: Սակայն հայտերի բացման նիստից հետո Ընկերությունը տեղեկացել է, որ գնման առարկան իրականում հանդիսացել է շինանյութի ձեռքբերումը: «Լիգապլյուս» ՍՊԸ-ի պնդմամբ նշված հանգամանքը Ընկերությանը գցել է ակնհայտ շփոթության մեջ, ինչի հետևանքով վերջինս չի մասնակցել տվյալ գնման ընթացակարգին և կորցրել է համապատասխան ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ակնկալվող տնտեսական շահի՝ շահույթ հետապնդելու իր հնարավորությունը: Սա նաև մրցույթի արդյունքում պատվիրատուի համար հնարավոր առավել մրցակցային գնային առաջարկներ ստանալու իրավական հնարավորության բացթողում է:

«Լիգապլյուս» ՍՊԸ-ն նշել է, որ միանշանակ պետք է մասնակցեր արդեն իսկ կայացած գնման ընթացակարգի 17, 18, 19, 20, 21 և 22 չափաբաժիններին:

Ընկերության պնդմամբ առկա է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի, 5-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների խախտում, քանի որ այլ վերնագրով հայտարարության հրապարակումը հանդիսացել է մասնակցության հնարավորության սահմանափակում՝ դրանով իսկ ստեղծելով պոտենցյալ մասնակիցների շրջանում խտրականության դրսևորումներ: Նշված անճշտության պարագայում խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը:

Ընկերությունը գտնում է նաև, որ ՀՀ կառավարության 05.12.2013թ. թիվ 1370-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջները ևս չեն պահպանվել, քանի որ

գնման գործընթացի հայտարարության գլխագրերում պատշաճ ձևակերպված չի եղել գնման առարկան:

Բողոքը քննող հանձնաժողովին «Լիգապլյուս» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ համարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով իրականացված գնման ընթացակարգը և սահմանված կարգով այն վերահայտարարել:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 13.05.2014թ. N 04/032-840 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 07.05.2014թ. «Լիգապլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.05.2014թ. N ԴՎԱ/1248 գրությամբ «Լիգապլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը www.armeps.am համակարգով, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով շինանյութի գնման շրջանակային համաձայնագիր կնքած բոլոր մասնակիցներին, հրապարակային օֆերտայի միջոցով, ծանուցել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով շրջանակային համաձայնա-գրերի միջոցով գնման ընթացակարգ կազմակերպելու մասին և հրավիրել մասնակցելու ընթացակարգին՝ միաժամանակ, հավասար հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացնելու էլեկտրոնային հայտ: Պատվիրատուն գտնում է, որ համակարգի տեխնիկական թերության պատճառով ծանուցումը «Դեղորայքի ձեռքբերման ընթացակարգ» վերնագրվելով մասնակիցներին, որպես շինանյութերի գնման համաձայնագիր կնքած կողմ չի զրկել մրցույթին մասնակցելու հնարավորությունից, քանի որ համակարգը հրավերն առաքել է միայն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով շինանյութի գնման շրջանակային համաձայնագիր կնքած, այլ ոչ թե «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով դեղորայքի և պատվաստանյութերի գնման շրջանակային համաձայնագիր կնքած մասնակիցներին: «Լիգապլյուս» ՍՊԸ-ն, որպես N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-426» ծածկագրով

շինանյութի գնման շրջանակային համաձայնագիր կնքած կողմ, www.armeps.am համակարգի կողմից ևս պատշաճ կերպով ծանուցվել է կազմակերպվող գնման ընթացակարգի մասին, չնայած, որ համակարգում այն վերնագրված է եղել «Դեղորայքի ձեռքբերման ընթացակարգ»: Ընդ որում, կցված փաստաթղթում (հրավերում) առարկայի գնման բնութագրերն եղել են հստակ, տարանջատված 58 չափաբաժնի, ինչն ակնառու է նաև մրցույթի կառուցվածքից:

Պատվիրատուն հայտնել է, որ հրավերը հրապարակվել է նաև www.gnumner.am կայքում, որպես շինանյութի գնման ընթացակարգ՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Պատվիրատուն նշել է, որ հրավերով սահմանված ժամկետում www.armeps.am համակարգով հայտ են ներկայացրել 17 մասնակից, որը փաստում է գնումների մասին ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված սկզբունքների պահպանման մասին: Բացի այդ, ըստ Պատվիրատուի, «Լիգապլյուս» ՍՊԸ-ն, անգործություն դրսևորելով, չի օգտվել իր պարզաբանում ստանալու իրավունքից:

Պատվիրատուն գտնում է, որ ձեռնարկատերը ցանկության դեպքում օբյեկտիվորեն հնարավորություն է ունեցել մասնակցելու գնման ընթացակարգին, քանի որ ծանուցվել է իր կողմից կնքած N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-426» ծածկագրով շինանյութի գնման շրջանակային համաձայնագրի շրջանակներում և հրավերը հրապարակվել է www.gnumner.am կայքում, իսկ կցված գնման բնութագրերից և մրցույթի կառուցվածքից ակնհայտ է գնման առարկան:

3. ԳԲԽ-15/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-15/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «Լիգապլյուս» ՍՊԸ-ի կողմից 07.05.2014թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը

(այսուհետ՝ նաև Հրավեր) և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Կենտրոնին հասցեագրված 19.05.2014թ. N ԴՎԱ/1248 գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակեպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

«Լիգապլյուս» ՍՊԸ-ն 07.05.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգը www.armeps.am էլեկտրոնային համակարգում հայտարարվել և վերնագրվել է որպես դեղորայքի ձեռքբերման ընթացակարգ: Մասնավորապես, կայքում տեղադրված համապատասխան գլխագրերում այն ներկայացվել է որպես «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով դեղորայքի գնման ընթացակարգի հրավեր, այնինչ հայտերի բացման նիստից հետո «Լիգապլյուս» ՍՊԸ-ն տեղեկացել է, որ գնման առարկան հանդիսացել է շինանյութի ձեռքբերումը:

«Լիգապլյուս» ՍՊԸ-ն հայտնել է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 05.12.2013թ. թիվ 1370-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջները:

Ընկերությունը Գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է չեղյալ համարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով իրականացված գնման ընթացակարգը և սահմանված կարգով այն վերահայտարարել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը www.armeps.am համակարգով, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով շինանյութի գնման շրջանակային համաձայնագիր կնքած բոլոր մասնակիցներին, ծանուցել է համապատասխան Ընթացակարգ կազմակերպելու մասին: Պատվիրատուն պնդում է, որ այն հանգամանքը, որ համակարգի տեխնիկական թերության պատճառով ծանուցումը վերնագրվել է «Դեղորայքի ձեռքբերման ընթացակարգ» մասնակիցներին, որպես շինանյութերի գնման համաձայնագիր կնքած կողմ, չի զրկել մրցույթին մասնակցելու հնարավորությունից, քանի որ համակարգը հրավերն առաքել է միայն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով շինանյութի գնման շրջանակային համաձայնագիր կնքած, այլ ոչ թե «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով

դեղորայքի և պատվաստանյութերի գնման շրջանակային համաձայնագիր կնքած մասնակիցներին: Ընկերությունը ևս, որպես N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-426» ծածկագրով շինանյութի գնման շրջանակային համաձայնագիր կնքած կողմ, www.armeps.am համակարգի կողմից պատշաճ կերպով ծանուցվել է կազմակերպվող գնման ընթացակարգի մասին, չնայած որ համակարգում այն վերնագրված է եղել «Դեղորայքի ձեռքբերման ընթացակարգ»: Պատվիրատուն նշել է նաև, որ կցված փաստաթղթում (հրավերում) առարկայի գնման բնութագրերն եղել են հստակ, տարանջատված 58 չափաբաժնի, ինչն ակնառու է նաև Ընթացակարգի կառուցվածքից:

Պատվիրատուն գտնում է, որ Ընկերությունը, անգործություն դրսևորելով, չի օգտվել պարզաբանում ստանալու իր իրավունքից, բացի այդ ցանկության դեպքում օբյեկտիվորեն հնարավորություն է ունեցել մասնակցելու Ընթացակարգին, քանի որ ծանուցվել է իր կողմից կնքած N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-426» ծածկագրով շինանյութի գնման շրջանակային համաձայնագրի շրջանակներում, իսկ հրավերը հրապարակվել է նաև www.gnumner.am կայքում:

Միաժամանակ, Պատվիրատուն հայտնել է, որ չնայած առկա թերությանը, հրավերով սահմանված ժամկետում www.armeps.am համակարգով հայտ են ներկայացրել 17 մասնակից, որը փաստում է գնումների մասին ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված սկզբունքների պահպանման մասին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնումների կամ նախաորակավորման հայտարարության և (կամ) հրավերի տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝ հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկում է օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով:

ՀՀ կառավարության 05.12.2013թ. «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» N 1370-Ն որոշման (այսուհետ՝ նաև Կարգ) 15-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պատվիրատուն նույն կարգի համաձայն գնում կատարելու համար՝ համակարգում հրապարակում է գնման ընթացակարգի մասին հայտարարության և

հրավերի տեքստերը միաժամանակ հրապարակվում են www.gnumner.am և www.azdarar.am կայքերում: Գերակա է համարվում www.armeps.am կայքում տեղադրված տեղեկատվությունը: Ընդ որում, շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում ծանուցումն ավտոմատ եղանակով ուղարկվում է տվյալ ընթացակարգի համար համակարգում գրանցված հնարավոր մասնակիցներին:

Պատվիրատուի այն պնդումը, որ Ընկերությունը ծանուցվել է որպես N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով գրանցված մասնակից, ինչը վերջինիս չի զրկել տվյալ Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից, անհիմն է, քանի որ «Լիգապլյուս» ՍՊԸ-ի և Կենտրոնի միջև կնքվել են թվով 10 ծածկագրերով շրջանակային համաձայնագրեր, և Ընկերությունը կարող էր չիմանալ դրանց յուրաքանչյուրի գնման առարկան՝ ըստ ծածկագրերի, առավել ևս այն դեպքում, երբ Գնումների աջակցման կենտրոնի պետի կողմից շրջանակային համաձայնագրերի միջոցով շինանյութի ձեռքբերման նպատակով հաստատված գնման ընթացակարգի հրավերի ծածկագիրն է հանդիսանում «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագիրը, այլ ոչ թե «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագիրը:

Պատվիրատուի այն պնդումը, թե ծանուցումը «Դեղորայքի ձեռքբերման ընթացակարգ» վերնագրվել է համակարգի տեխնիկական թերության պատճառով, անհիմն է, քանի որ նշված գործողությունը թե էլեկտրոնային գնումների armeps համակարգում և թե gnumner.am կայքում, կատարում է ոչ թե համակարգն՝ ավտոմատ եղանակով, այլ Պատվիրատուն՝ համապատասխան դաշտերում տեղեկատվության լրացման միջոցով:

Պատվիրատուն նշել է, որ հրավերով սահմանված ժամկետում armeps համակարգով հայտ են ներկայացրել 17 մասնակից, ինչը փաստում է գնումների մասին ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված սկզբունքների պահպանման մասին, հիմնավոր չէ, քանի որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով շինանյութի ձեռքբերման նպատակով որպես հնարավոր մասնակից հայտ են ներկայացրել և գրանցվել են թվով 370 կազմակերպություն և այն, որ նշված 370 կազմակերպություններից 17-ն են հայտ ներկայացրել, ամենևին չի փաստում, թե պահպանվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված սկզբունքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում,

• 2 մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքների վրա:

Գտնում ենք, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները, քանի որ armeps համակարգում և gnumner.am կայքում «Շինանյութի ձեռքբերման ընթացակարգ»-ի փոխարեն «Դեղորայքի ձեռքբերման ընթացակարգ» անվանումն օբյեկտիվորեն թյուրիմացության մեջ կարող էր գցել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով շինանյութի ձեռքբերման նպատակով որպես հնարավոր մասնակից գրանցված կազմակերպություններին, այդ թվում նաև «Լիգապլյուս» ՍՊԸ-ին, ինչի արդյունքում վերջինս չի մասնակցել նշված ընթացակարգին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետն՝ առաջարկում ենք «Լիգապլյուս» ՍՊԸ-ի կողմից 07.05.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-15/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Եղիազարյան